



California's Protection & Advocacy System
Toll-Free (800) 776-5746

Խնամակալի պարտականությունները

Օգոստոս 2012, Հրատ. # 5514.10

Ո՞վ է խնամակալը:

Խնամակալը դատարանի կողմից նշանակված անձ է, ով հետևում է, որ Դուք ունենաք սնունդ, ապաստան, հագուստ, ինչպես նաև ստանաք Ձեր անձնական կարիքները բավարարող ծառայություններ:

Ո՞վ կարող է լինել խնամակալ:

Հանրային պահապան կամ խնամակալ կարող է նշանակվել միայն այն դեպքում, եթե Լանտերման-Պետրիս-Շորթ օրենքի (LPS, Lanterman-Petris-Short Act) համաձայն գտնվում եք ժամանակավոր խնամակալության ներքո: Եթե պայմանունակ եք գտնվել ամբողջական կամ միամյա LPS խնամակալության համար, խնամակալ կարող է հանդիսանալ որևէ բարեկամ, ընկեր կամ հանրային կամ մասնավոր պահապան:

Ի՞նչ պետք է անի խնամակալը:

Որևէ անձի խնամակալը պետք է հետևի, որ նրա անձնական կարիքները բավարարված լինեն: Ունեցվածքի խնամակալը պետք է ապահովի Ձեր ֆինանսական միջոցների անվտանգությունը կամ կառավարի դրանք: Ընդհանուր առմամբ, խնամակալը պարտավորվում է պաշտպանել Ձեզ չարաշահումից կամ արհամարանքից և օգնել ինտեգրվել հասարակության մեջ:

Ինչպե՞ս կարող է խնամակալը կազմակերպել իմ խնամքը և պաշտպանությունը:

Խնամակալը պարտավորվում է կազմակերպել որոշակի ծառայություններ, որոնք կբավարարեն Ձեր ամենօրյա կարիքները, ինչպիսիք են՝ առողջական խնամքը, սնունդը, հագուստը, անձնական խնամքը, տրանսպորտը, հանգիստը և տնային տնտեսությունը:

Ի՞նչ տեղի կունենա, եթե խնամակալը վերահսկողություն ունենա իմ ֆինանսների նկատմամբ:

Դա կարող է ներառել՝ Ձեր ունեցվածքի կառավարումը, վճարների մարումը, բյուջեն վարելը և Ձեզ անձնական դրամական միջոցներ տրամադրելը: Այդ դեպքում խնամակալը պետք է հաշվետու լինի Ձեր և դատարանի առջև և ներկայացնի, թե ինչպես է օգտագործել Ձեր դրամական միջոցները:

Ինչպե՞ս կարող եմ ես պարզել, թե ինչ պարտականություններ ունի իմ խնամակալը:

Կարող եք հարցնել խնամակալին հեռախոսով կամ նամակով: Եթե պատասխան չստանաք, կարող եք նամակ գրել ղեկավարին: Եթե չգիտեք ղեկավարի անունը, կարող եք զանգահարել խնամակալի գրասենյակ և հարցնել ղեկավարի անունը և հասցեն: Կամ կարող եք հղել Ձեր նամակը [Խնամակալի Անունը]-ի Ղեկավարին: Կարող եք նաև զանգահարել կամ գրել Ձեր փաստաբանին: Նա սովորաբար հանդես է գալիս որպես հանրային պաշտպան: Կարող եք նրան ուղղել Ձեր հարցերը կամ բացատրել Ձեր խնդիրը և օգնություն խնդրել:

Որտե՞ղ պետք է խնամակալը ինձ համար ապրելու տեղ գտնի:

Դուք իրավունք ունեք ապրել հնարավորինս քիչ սահմանափակումներով, ամենաշատ ինտեգրված տարածքում, որը հարմար է Ձեր անձնական կարիքների համար: Սովորաբար դա մի տեղ

Է, որտեղ Դուք կարող եք առավելագույնս հնարավոր կերպով շփվել առանց անկարողությունների մարդկանց հետ: Օրինակ, դա կարող է լինել օժանդակ ծառայություններով բնակարան: Կարող է լինել նաև տուն, որտեղ կարող եք ապրել այլ մարդկանց հետ համատեղ:

Ինչպե՞ս պետք է իմ խնամակալը որոշումներ կայացնի իմ փոխարեն:

Խնամակալը պետք է գործի՝ պաշտպանելով Ձեր շահերը: Որոշումները պետք է հիմնված լինեն Ձեր կողմից արտահայտված շահերի վրա, եթե դրանք հայտնի են: Սա նշանակում է, որ պետք է տեղյակ պահեք Ձեր խնամակալին, թե ինչ եք նախընտրում: Խնամակալը պարտավորվում է իր գործողությունները հարմարեցնել՝ ըստ Ձեր նախապատվությունների: Դա նշանակում է, որ Ձեր խնամակալը պետք է հարգի Ձեր ցանկությունները, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կարող է խոչընդոտել նրա պարտականությունների կատարմանը կամ հանդես գալ որպես Ձեր ունեցվածքի չհիմնավորված ծախս:

Կարո՞ղ է արդյոք խնամակալը իմ փոխարեն մտավոր առողջության բուժման որոշումներ կայացնել:

Այո, եթե դատարանը տա նրան այդ իրավունքը: Այդ դեպքում խնամակալը պետք է տեղեկացված համաձայնություն տրամադրի: Սակայն սա պետք է արվի Ձեզ հետ խորհրդակցելուց հետո:

Կարո՞ղ է արդյոք խնամակալը վիրահատություն կատարելու համաձայնություն տալ:

Որևէ վիրահատություն չի կարող կատարվել Ձեզ վրա, եթե հրաժարվեք, քանի դեռ չկա դատարանի որոշում, կամ տեղի չի ունեցել որևէ արտակարգ դեպք, որի արդյունքում կորցրել եք կյանքը կամ ստացել լուրջ մարմնական վնասվածք:

Ի՞նչ հաճախականությամբ պետք է իմ խնամակալը այցելի ինձ:

Ձեր խնամակալը պետք է այցելի Ձեզ այնքան հաճախ, որ հնարավորություն ունենա համոզվելու, որ Ձեր կարիքները բավարարված են: Այցելությունների հաճախականությունը կարող է տարբեր լինել՝ կախված Ձեր կյանքի պայմաններից և կարիքներից: Օրինակ՝ Օրանժ վարչաշրջանում խնամակալը պետք է այցելի խնամքի կենտրոնում գտնվող խնամառուին ամսեկան առնվազն մեկ անգամ: Խնամակալը պետք է նաև բավարար կերպով կապ հաստատի, որպեսզի համոզվի, որ Դուք ապրում եք հնարավորինս քիչ սահմանափակումներով, ամենաշատ ինտեգրված տարածքում, որը հարմար է Ձեր կարիքների համար:

Disability Rights California is funded by a variety of sources, for a complete list of funders, go to <http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html>.